



ԺԱՆԺԱՂԱՎԱՐԻ  
ՈՒ ԱՇՆԱՆԱՎԱՐԻ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ  
ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ



ԱՐՄ.

2-701a



Ա. Ի. ՄԵԿՎԵԴՅԱՆԻ

# ԾԱՆԾԱՂԱՎԱՐԻ ու ԱԾՆԱՆԱՎԱՐԻ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՁԱՆՁԱՐՈՒՄ

Բ. Ա. Ս. Ս. Ս. Ս. Ս.

Ա. 1933 Բ.

ԱԿՏ № 763

## ՀՆՁԱԾ ԱՐՏԱՏԵՂԵՐԻ ԾԱՆԾԱՂԱՎԱՐԻ ՅԵՎ ԱԾՆԱՆԱՎԱՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԵՋ

«Յերկրորդ հնգամյակի կենսունակամ խնդիրը պե՛տք է լինի կայսեմեստակամ յե՛կ խորհեմեստակամ դաճեմքի բերքի վնասակամ բարձրացումը յե՛կ յեքաճի դե՛մ կ. ղ. վելու հարցի բոլեմվիկակամ լուծումը»: Այսպիսի դիրեկտիվ և տվել XVII Համամիութենական կուսակցական կոնֆերենցիան յերկրորդ հնգամյակի համար գյուղատնտեսության առաքարիդում:

Բոլոր կոլտնտեսականների, կոլտնտեսականուհիների և խորհատնտեսությունների և ՄՏ՝-ների աշխատողների ուշադրությունը իրենց ամենորյա գործնական աշխատանքում պետք է կենտրոնացած լինի այս ամենակարևոր խնդրի կատարման վրա:

Յերկրորդ հնգամյակի առաջին ցանքսը ցույց տվեց դաշտային աշխատանքների վորակի լավացումը ամեն տեղ: Կուսակցությունը արմատապես կարեց ջախջախված կուլակության մնացորդների և ֆեոսալարական տարրերի բոլոր փորձերը՝ բեկանելու կոլտնտեսային և խորհատնտեսային դաշտերի բերքի բարձրացման միջոցառումները:

Միայն այն կոլտնտեսություններում և խորհատնտեսություններում, վորտեղ կուսակցական կազմակերպությունները չեն գլխավորել կռիվ բարձր բերքի համար, մորիկ:

ԱԿՏ. № 20690

զացիայի չեն յենթարկել մասսաների դայրույթը սարտած-  
նիկ տարրերի դեմ կովիւու համար ազրտտեխնիկայի կովի-  
դործում — նկատվում է յին հողի վաս մշակման և ֆլասս-  
բարահան ցանքսի դեպքեր: Այս սոորտունիստական պե-  
կազարությունը մի շարք տեղերում բուլիիական անխնա-  
յությամբ մերկացվեց ռայոնական և յերկրային կուս. կազ-  
մակերպությունների կողմից և ստացավ համապատասխան  
գիմադրություն:

Մենատնտեսության ծանր ժաւանդությունը և կուլակ ա-  
յին ֆլասսարական հետեանքը դեռ ևս զգացվում և կուլան-  
տեսությունների և խորհանտեսությունների դաշտերում:  
Սրան իբրև ապացույց հանդիսանում է մալախոտերի, ֆլա-  
սատու միջատների և հիվանդությունների (աւանձնապէս  
հացարույսերի վրա ժանդախ) դարգացումը, վար և մեծ ար-  
դելք է ստեղծում ամենարարձր բերք ստանալու համար:

Այժմ կուլտնտեսականների, կուլտնտեսականուհիների և  
խորհանտեսությունների բանվորների խնդիրն այն է, վար-  
պեսակի, բարձր բերքի համար կովիւով, վերացնեն մալախո-  
տերը, ֆլասսակար միջատները և հիվանդությունները, վո-  
րոնք բազմացել են ազրտտեխնիկայի դեմ յեղած կուլակա-  
յին սարտածի հեռահանքով: Դաշտերի մալախոտերը, բույ-  
սերի հիվանդությունները կուլակի դաշնակիցներն են: Նը-  
րանք պետք է ամենակարճ ժամանակում վոչնչացվեն: Յու-  
րաքանչյուր կուլտնտեսության, յուրաքանչյուր խորհանտե-  
սության և ամեն մի բրիգադի համար նախատինք են հան-  
դիսանում նրանց դաշտերում մալախոտերը, ֆլասսակար մի-  
ջատները և մշակվող բույսերի հիվանդադին վիճակը:

Կուսակցության ամենալավ անդամների — ՀԿԿ(բ)-ի կի-  
կողմից ուղարկված քաղբածինականների, նույնպէս և Յեր-  
կրկոմի կողմից ուղարկված կուսբջիջների քարտուղարները  
դեկավարությամբ կուլտնտեսականները, կուլտնտեսականու-  
հիները և խորհանտեսությունների բանվորները պետք է



վճուական կոթիվ մզին բարձր բերքի համար, վոչնչացնելով մուսխոտերը, փնասատուներն ու հիվանդությունները:

Գարնանացանի հաջողությունները պետք է ամրացվին հնձի և աշնան դաշտային աշխատանքները հաջող անցկացնելով և դրանով արդեն այս տարում վճուական քայլ արված կլինի կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի լողունդի իրականացման դարձում — «կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկական, իսկ կոլտնտեսականներին ունևոր»:

Գարնանացան բույսերի բերքի բարձրացման, մուսխոտերի, փնասակար միջատների և հիվանդությունների վոչնչացման մեջ վճուական նշանակություն ունի աշնանավարը և հնձած արտատեղերի ծանծաղավարը:

Կուլակային փնասարար տարրերը և նրանց պոչուկները, անշուշտ, առաջիկա աշնանավարի և հնձած արտատեղերի ծանծաղավարի կամպանիայի անցկացման ժամանակ պիտի փորձեն բեկանել այն ազրոտեխնիկական միջոցառումները, վորոնք ուղղված են բերքի բարձրացման համար: Այդ պատճառով աշնանավարի պլանի բարձրավորակ և 100<sup>0</sup>/0-յին կատարումը և ծանծաղավարի լայն կիրառումը պետք է կոլտնտեսական մասսաների ուշադրության կենտրոնում լինի:

Նա, ով վոր աշնանավարի և ծանծաղավարի համար չպետք է պայքարի, նա, ով վոր չպիտի ապահովի աշխատանքների բարձր վորակը, նա կոլտնտեսությունների և խորհատնտեսությունների թշնամին է, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդման թշնամին և կուլակի ու փնասարարի ոգնականն է: Այդպիսի մարդկանց համար տեղ չկա կոլտնտեսություններում և խորհատնտեսություններում:

Հացահանձնումը, իբրև առաջին պատվիրան ամեն մի խորհատնտեսության և կոլտնտեսության համար, կանոնավոր կերպով համադրելով բերքահավաքի և աշնանացանի հետ,

յերկրորդ հնդամյակի տառջին տարվա աշնանային դաշտային աշխատանքների շրջանում պետք և հաստատուն հիմք դնել դարնանացան բույսերի բերքի բարձրացմանը լիակատար և բարձրավորակ աշնանավար հատաբերով և հնձած արտատեղերի ծանծաղավարը լայն կերպով կիրառելով:

Պետք և լավ հիշել, վոր աշնանավարը և հնձած արտատեղերի ծանծաղավարը իբրև ազդեցիկ միջոցներ, նպաստում են՝

- 1) գարնանացան կուլտուրաների բերքի բարձրացմանը,
- 2) մոլախոտերի, վնասատուների յեվ հիվանդությունների վնջեցումներ,
- 3) յերաւեսի դեմ կովի սպանովմանը, կուտակելով յեվ պահպանելով հողի մեջ խոնավությունը.
- 4) հողի կառուցվածքի (ստրուկտուրայի) լավացմանը յեվ նրա պեղարեւորյան բարձրացմանը.
- 5) գարնանային դաւեսային աւխասանների յեվ նրանց ավելի կարն ժամանակում անցկացնելու հեւեսացմանը.
- 6) մեակովի բույսերի խնամքի հեւեսացմանը, մոլախոտերից ազատ հողեր ունենալու պատճառով:

Գիտական հիմնարկների բաղմաթիւ փորձերն ու դիտողությունները և խորհանսեսությունների ու կոլտնտեսությունների պրակտիկան ցույց են տալիս, վոր յերկրամասի պայմաններում բոլոր դարնանացան բույսերը բերքը բարձրացնում են այն ժամանակ, յերբ ցանված են կամ աշնանավարի կամ աշնանավարի ու ծանծաղավարի մեջ: Սակայն, նկատված է, վոր բույսերից մեջանխը աշնանավարի և ծանծաղավարի մեջ լավ են աճում, իսկ մյուսներն ավելի թույլ:

Ամենալավ հետևանք տալիս են աշնանավարի և հնձած արտատեղերի ծանծաղավարի մեջ դարնանացան հացաբույսերը, արևածաղիկը, դեմադերշակը, բամբակենին, ծխախոտը, շաքարի ճակնդեղը, արոտները, նոր թելատու բույսերը և կաբոտֆիլը. ուստի յուրաքանչյուր կոլտնտեսու-

թյան և խորհանտեսության հիմնական խնդիրը պետք է լինի այս կուլտուրաներն ապահովել աշնանավարով:

Դրա հետ միասին, հաշվի առնելով և այն, վոր մյուս բույսերն ևս աշնանավարի մեջ ցանելու դեպքում բարձրացնում են իրենց բերքը, նույնպես և յերկրամասի դաշտերի տնխնամությունը, յուրաքանչյուր կոլանտեսություն և խորհանտեսություն բոլոր դարնանացան բույսերի հողաբաժինը պետք է ապահովի աշնանավարով:

Գարնանացան բույսերի բերքի բարձացման մեջ աշնանավարի և ծանծաղավարի խոշոր նշանակությունը կարելի չէ հաստատել փորձնական կայանների հետևալ տվյալներով.

Փորձնական կայանների անունները	Նախապես ծանծաղավար կատարված աշնանավարի մեջ ցանված կուլտուրաների բերքի ավելացումը (ցենտներով հեկտարից) զարնտնավար ցանցների հակառակ				
	Յոբեն	Գալ	Վառձալ	Նվաճած	Գնացի
Դոնեցի . . . . .	1,3	2,2	—	—	—
Ռոստով-Նախիջևանի . . . . .	0,8	—	—	—	—
Գուբանի . . . . .	2,0	—	—	1,8	1,8
Պրիկուսկի . . . . .	1,0	—	—	—	—
Ստավրոպոլի . . . . .	—	0,6	—	—	—
Նասենաուկի . . . . .	—	—	0,9	—	—

ՄԱՆՈՒՄՆԻՍՏՈՒՆ Գուբանի և Պրիկուսկու կայաններում ցուրենի ցանցը կատարվել է աշնանավարի մեջ առանց նախապես ծանծաղավար կատարելու:

Պրիկուսկու փորձնական կայանում բավարակենու բերքը 1931 թվին յեղել է (հուսով թի բերքը մինչև սառնամանինները):

Ողոսաստիւն վարած և տափանած արտոււմ . . .	7,4
» » բայց առանց տափանելու . . .	7,2
Սեպտեմբերին վարած և տափանած արտոււմ . . .	5,5
» » բայց առանց տափանելու . . .	5,5
Նոյեմբերին վարած արտոււմ . . . . .	5,6
Վաղ դարնանաձարի մեջ . . . . .	6,5
Ուշ » » . . . . .	3,9

Քամանի փորձնական կայանոււմ 1932 թվին բարձրահի-  
նու բերքը յեղել և.

Վաղ աշնանաձարի մեջ (ողոսաստի)	. . . . .	13,6
Միջին » » (հոկտեմբերի)	. . . . .	12,1
Ուշ » » (նոյեմբերի)	. . . . .	10,7
Վաղ դարնանաձարի մեջ . . . . .		11,7
Ուշ » » . . . . .		10,8

Այսպիսի որինակներ կարելի յև խիստ շատ բերել և բու-  
լորն ել կհաստատեն աշնանաձարի ու ծանծաղաձարի խոշոր  
նշանակութիւնը դարնանացան կուլտուրաների բերքի բար-  
ձրացման մեջ:

Փորձնական կայանների դաշտերը համեմատաբար մա-  
քուր են մոլախոտերից և լճի կլ մշակված, այնուամենայ-  
նիվ աշնանաձարը այս հողերում ևս ավել և բերքի զգալի  
բարձրացում:

Բոլորովին ակնահայտնի յև, վոր ագրոտեխնիկան բանի  
տեղ չգնելու հետևանքով կեղտոտված և անխնամ հողերի  
վրա, վորոնք գտնվում են շատ կոլտնտեսութիւններում և  
խորհանտեսութիւններում, աշնանաձարի նշանակութիւնն  
ավելի ևս մեծ և:

Պետք է ինկատի ունենալ, վոր աշնանաձարն առանձ-  
նապէս լավ և ազդում բերքի բարձրացման վրա անբարե-  
նպաստ տարիներին:

Այստեղ հետև պետք է հնալ որինակների համար: Ամերթին հայտնի յե, վոր 1932 թ. անբարեհաջող եր: Այդ տարում կոլանտեսությունները և խորհտեսությունները վատ բերք ստացան, սակայն դրա հետ միասին շատ կոլանտեսություններում և խորհտեսություններում, վերջեղ ագրամոլիական կանոնները պահպանվել էին յեվ կար յավ առնանավար, սացվել են բավական բարձր բերքեր:

Միջոտինակի ոայտնի «Կրասնըյ պոկազ» կոլանտեսությունը գարնանավարից սացավ 1 ցեմսներ գարնանացան ցորեն, իսկ առնանավարից 6 ցեմսներ:

Պավլովսկի ոայտնի «Իսկրա» կոլանտեսությունը յեղիպտացորենի տակ գտնված արտի ցանքսից ստացել և 1,7 ցենտներ գարնանացան ցորեն, իսկ առնանավարից՝ 9 ցեմսներ:

Գորյաչեվոզսկի ոայտնի «Կրասնըյ բոյից» կոլանտեսությունը գարնանավարից ստացել և 3 ցենտներ գարի, իսկ առնանավարից 6 ցեմսներ:

---

## ԻՆՉՈՒՒ ԱՇՆԱՆԱՎԱՐԸ ՅԵՎ ՀՆՁԱԾ ԱՐՏԱՏԵՂԵՐԻ ԾԱՆԾԱՂԱՎԱՐԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ ԵՆ

Վերևում մեջ բերված տվյալներից յերևում և, վոր աշնանավարը և ծանծաղավարը նպաստում են գարնանացան բույսերի բերքի բարձրացման:

Յուրաքանչյուր կոլանտեսական, յուրաքանչյուր կոլանտեսականուհի և խորհտեսության և ՄՏԿ-ի յուրաքանչյուր բանվոր պարտական և իմանալ, թե ինչնև համար գարնանացան բույսերի բերքը աշնանավարի ու ծանծաղավարի մեջ բարձրանում և:

Ամենից առաջ, բերքի բարձրացումը աշնանավարից և ծանծաղավարից, բացատրվում և նրանով, վոր այս բոլոր

միջոցները նպաստում են մուլտիսոսերի վոչնչացման: Շատ կու-  
տնահասականներ և խորհանտեսության և ՄՏԿ-ի բանվորներ  
այս բանը դիտեն իրենց պրակտիկայից: Փորձնական կա-  
յաններում անմիջական դիտողությունները խիստակա-  
հաստատում են, վոր մուլտիսոսերի քանակը աշնանավարի և  
ծանծաղավարի դեպքում քչանում է:

Ոստանվ-նախիջևանի փորձնական կայանի փորձնական  
հողաբաժինների վրա արած դիտողությունների համաձայն,  
վորտեղ ծանծաղավար չի կատարվել, մուլտիսոսեր հաշվել են  
8,012 հատ, իսկ ծանծաղավար կատարված փորձնական հո-  
ղաբաժինների վրա յեզել և միայն 2900 հատ, այսինքն  
համարյա թե 3 անգամ քիչ: Այս կայանը ընդգծում է,  
վոր այն փորձնական հողաբաժինները, վորտեղ ծանծաղա-  
վար և կատարվել, սեզ բոլորովին չկա, իսկ դարնանավարի  
դեպքում 1 ցենաներից հավաքվել է սեզի 107 Ֆունտ միլ:

Գարնանացան ցորենի մուլտիսոսերով կեղտոտվածության  
հաշիվները, հողի մշակության տարրեր ժամկետերում,  
Պրիկուլմսի փորձնական կայանում, ավել են այսպիսի  
պատկեր.

Վարելու ժամկետը	Մուլտիսոսերի քանակը 1 ց. արշինի վրա
Վարած ոգոստոսի 15-ին . . . . .	10
» սեպտեմբերի 15-ին . . . . .	10
» հոկտեմբերի 15-ին . . . . .	18
» նոյեմբերի 15-ին . . . . .	21
ծանծաղավար և աշնանավար . . . . .	9
ծանծաղավար և դարնանավար . . . . .	10
դարնանավար . . . . .	35

Ամենաքիչ կեղտոտվածությունը այն հողամասերումն է,  
վորտեղ կատարվել է ծանծաղավար և ավելի վաղ աշ-  
նանավար:

Կուրանի փորձնական կայանում դարնանացան ցորենի կեղտոտվածության հաշվառքը, վոր ցանված է յեղել դանազան տեսակ մշակված հողաբաժիններում, ցույց տվեց հետևյալը.

### Առաջին փորձը

<sup>1</sup>/<sub>2</sub> ք. մետր ատրածությունից ստացված մուխոտների կշիռը դրամներով

Վարած սեպտեմբերի մեջ . . . . .	33
» հոկտեմբերի մեջ . . . . .	32
» նոյեմբերի մեջ . . . . .	30
» դարնան (մարտի մեջ) . . . . .	44

### Յերկուրդ փորձը

աշնանավար ծանծաղավարի հետ . . .	17
աշնանավար առանց ծանծաղավարի . .	28

Վորքան վարն ուշանում է, այնքան կեղտոտվածությունը շատանում է (32 դրամից 1 ք. մետրից մինչև 44 գր), իսկ ծանծաղավարը խիստ կերպով իջեցնում է մուխոտների քանակը:

Պրիկումսկի փորձնական կայանում 1931 թվին բամբակենին բամբակենու հետևից ցանելուց հետո նրա կեղտոտվածությունը հետևյալն էր.

Մուխոտների կշիռը դրամներով  
1 ք. մետրի վրա

Աշնանավարի մեջ կատարած ցանքսում . . .	48
դարնանավարի մեջ կատարած ցանքսում . . .	63

Այս փորձնական կայանում մուխոտների քանակը 1 քառակուսի մետրի վրա 1932 թվին յեղել է.

Վաղ աշնանավարի մեջ . . . . .	10,0
Միջին » » . . . . .	33,4
Ուշ » » . . . . .	32,5
Վաղ գարնանավարի մեջ . . . . .	26,7

Այսպիսով, հնարավոր չափով կանուխ կատարված առնա-  
նավար լիվ ծանծաղավարը նպաստում էն մոլախոտերի վո-  
չնչացման: Այս հանգամանքը դաշտերի սաստիկ կեղտոտ-  
վածության դեղքում յերկրամասում խոշոր նշանակութունն  
ունի բարձր բերքի համար կսվի դործում:

Ժամանակին, բավականաչափ խոր և կանսնավոր կա-  
տարված աշնանավարը, լավ ծածկելով նախորդ բերքի մնա-  
ցորդները (կոթերը, ցողունները, թափթփված տերևները և  
այլն), նպաստում է այդ մնացորդների վրա յեղած մնա-  
սակար միջատների (սղոցուկները և ուրիշները) և հիվան-  
դությունների (ժանգոի, պնդախտի, փտածության և  
մյուսների) վոչնչացման:

Վերջին յերևու տարվա ընթացքում ժանգոը խիստ շատ  
տարածվել է յերկրամասում և խիստ կերպով իջնցնում է  
բերքը: Իր ժամանակին կատարված ծանծաղավարը և խոր  
աշնանավարը վոչնչացնում են այդ վարակը:

Իրա հետ միասին, հողի ավելի խորին շերտերը շուտ  
տալով, վորտեղ պահվել են դանազան մնասակար միջատ-  
ներ, աշնանավարը նպաստում է նրանց վոչնչացման: Վնա-  
սակար միջատներին, նրանց թրթուռներին (վորդերին),  
հարսնյակներին, վորդերին հավաքում են թռչունները, վո-  
չնչանում են այդ մնասատուները արևից, անձրևից և  
ցրտերից:

Փորձնական կայաններում դիտողություններով հաս-  
տատված է, վոր վաղ կատարված ծանծաղավարը և աշնա-  
նավարը նպաստում են խոնավության կուտակմանը և պահ-  
պանմանը հողի մեջ:



Բացի գրանից, ծանծաղավարը և աշնանավարը, նպաստելով խոնավության և ողի հողի մեջ ներս թափանցելուն, ոժանդակում են սննդարար նյութերի կուտակման: Հաստատված է, վոր վորքան վաղ է կատարվում հողի մշակությունը դարնանացան բույսերի համար, այնքան էլ խոնավությունը բարձր է և ալելի շատ են կուտակվում նրա մեջ սննդարար նյութերը: Այսպես, Պոլտավայի փորձնական կայանի հրնգամյա տվյալների համաձայն հողի խոնավությունը 0 — 70 սմ խորության մեջ տարբեր ժամկետերում կատարված աշնանավարում յեղել և հետևյալը.

	Վարի ժամանակը		
	հուլիս	ոգոստոս	սեպտեմբ.
Ձմեռնամաին . . . . .	18,20/0	16,40/0	16,30/0
Հետևյալ գարնան . . . . .	24,60/0	23,80/0	23,80/0
Հասկ ըսց թողնելու ժամանակ	15,50/0	14,90/0	14,60/0

Սրա հետ միասին էլ սննդարար նյութերի (նիտրատների) քանակը հողի վարված շերտում յեղել և հետևյալը.

	վարի ժամկետը		
	հուլիս	ոգոստոս	սեպտեմբ.
Ոգոստոսի 30-ին . . . . .	14,6	4,5	2,9
Սեպտեմբերի 20-ին . . . . .	13,5	5,0	3,0
Հոկտեմբերի 14-ին . . . . .	15,5	3,8	2,7

Վորքան աշնանավարը վաղ է կատարվում, այնքան հողի խոնավությունը բարձր է և այնքան էլ շատ սննդարար նյութեր են կուտակվում:

Վերջապես իր ժամանակին և կանոնավոր կատարված ծանծաղավարը և աշնանավարը նպաստում են հողի կառուցվածքի (սարուկառուրայի) լավացման:

Աշունից վարված հողը անձրևներից և տաքության ու ցրտության իրար հաղորդելուց «փխրունանում է», կոչա

զնդերը և խոշոր կատրոնները փշրվում են, և արած գարնան  
ցանելու ժամանակ ստանում և ժանրահատիկ փխրուն կեր-  
պարանք:

Բոլոր ցույց տված հանդամանքները նպաստում են այն  
բանին, վոր աշնանավար և ծանծաղավար կատարված դեղ-  
քերում գարնանացան կուլտուրաների բերքը բարձրանում և:

Յուրաքանչյուր տարի կուսակցությունը և կառավարու-  
թյունը աշնանավար կատարելու առաջադրություններ են  
անորինում հանրապետությունների, յերկրամասերի և մար-  
զերի համար:

Շատ հանրապետություններ, յերկրամասեր և մարզեր  
արդեն դերակատարում են այդ առաջադրությունները: Հյու-  
սիսային Կովկասյան յերկրամասն իբրև համատարած կուլեկ-  
տիվացման առաջավոր յերկրամասերից մեկը, 1933 թվի աշ-  
նանավարի կամպանիայի ժամանակ պես և աեւանավարի  
պլանի կատարման յիվ ծանծաղավարի ծավալման բոլեւիկ-  
կական կուլի օրինակ ցույց օա:

Աշնանավարի և ծանծաղավարի նշանակությունը բերքի  
բարձրացման կուվում ապացուցված և թե փորձնական կա-  
յանների և թե առաջավոր կուլտնտեսությունների և խորհ-  
անտեսությունների կողմից: Հարկավոր և միայն բուլեւիկ-  
յան կուլի հողի աշնանային մշակման պլանային առաջա-  
դրության կատարման և դերակատարման համար:

Դասակարգային աշալը ջության բարձրացմամբ, աշնա-  
նավարի և ծանծաղավարի թերազնատեսության դեմ կուլե-  
լով, դեպի աշխատանքը գիտակցական վերաբերմունքով և  
աշխատանքի վորակի բարձրացման համար պայքարելով  
ամեն մի կուլտնտեսական, կուլտնտեսականուհի և ՄՏԿ-ի և  
խորհանտեսությունների յուրաքանչյուր բանվոր պետք և  
աղահովի աշնանավարի պլանի և ծանծաղավարի լայն կի-  
րտոման իրականացումը աշնանային դաշտային աշխատանք-  
ների շրջանում:

Սոցմրցման և հարվածայնութեան լայն ծավալուծը, դատարկապորտների, բվաչնեի, դործալիքների դեմ ամենամանհաշտ վերաբերմունքը հնարավորութուն են տալիս կոտնտեսութուններին և խորհտնտեսութուններին ընթացիկ տարվա աշնանավարի կամպանիայի ժամանակ ամրացնել գարնանացանի հաջողութունները և նոր հնարավորութուններ ստեղծել կոտնտեսութունների և խորհտնտեսութունների հետագա կազմակերպչական տնտեսական ամրապնդման համար:

Ձախ ջախված կուլակութեան մնացորդներն ամեն տարի ձգտում են աշնանավարի պլանը կասեցնել և բեկանել:

Աշնանային դաշտային աշխատանքների շուրջն ամեն տարի սրանում և դասակարգային կոիվը: Այս պետք է հիշել: Կուրտնի 1932 թվի աշնան դասերը չի կարելի մոռանալ:



## ՅԵՐԲ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԾԱՆԾԱՂԱՎԱՐԸ ՅԵՎ ԱՇՆԱՆԱՎԱՐԸ

Փորձնական կայանների դիտողութուններով հաստատված է, վոր վորքան վաղ և կատարվում ծանծաղավարը և աշնանավարն, այնքան բարձր է այդպիսի հողամասերում ցանված գարնանացան կուլտուրաների բերքը: Այս բանը հաստատվում է փորձնական կայանների ներքև բերված տվյալներով: (Աղյուսակը տես 14-րդ եջում):

Մեջ բերված աղյուսակից յերևում է, վոր աշնանավարի ժամկետերին առանձնապես զգայուն է գարնանացան ցորենը:

Այսպիսով՝ գարնանացան կուլտուրաների բերքը բարձրացնելու նամար հորկավոր և ժամկետավարը բուս հնարավորության կատարել ավելի վաղ:

Փորձնական կայանների անունները	զարնանա ցան ցու րենք		Շաքարի հակնդեղը 4 ասրվա ընթաց քում			Բամբակենին		
	Չգրվի մի րոպե	Չգրվի 2 րոպե	Վարված տեղում			Վարված տեղում		
			Ոգոս- տոսին	Սեպ- տեմբ. բերին	Հոկ- տեմբ. բերին	Ոգոս- տոսին	Սեպ- տեմբ. բերին	Հոկտեմբ. բերին
Դոնեցի . . . . .	6,5	6,3	—	—	—	—	—	—
Դոնի . . . . .	9,9	9,3	—	—	—	—	—	—
Կուրանի . . . . .	12,4	12,0	—	—	—	—	—	—
Պրիկուճակի . . . . .	9,3	6,8	—	—	—	7,4	5,5	6,6
Թամանի . . . . .	—	—	—	—	—	13,6	10,7	10,7
Մայիս մեկյան	—	—	252,3	217,1	206,5	—	—	—

Սովորաբար հացաբույսերը հավաքելուց հետո հնձված տեղը բավական մաքուր և լինում, սակայն մի քանի սրից հետո արդեն այգույսի հողաբաժինները ծածկվում են մուխոտներով և կանաչ են դառնում: Շատ մուխոտներ, վարոնք մինչ այդ ճնշված կյին հացաբույսերի կողմից, բերքահավաքից հետո սկսում են սարսափելի կերպով զարգանալ և միլիոնավոր հասունացող սերմերով ծածկել հողը:

Բերքահավաքից հետո հնձված տեղերում զարգացող մուխոտները չորացնում և ուժասպառ են անում հողը, վարակում են նրան հսկայական քանակությամբ սերմերով, ապաստարան և սնունդ են տալիս միասակար միջատներին և նպաստում են նրանց զարգացման:

Կոլտնտեսությունների, ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների դիտավոր խնդիրը պետք է լինի թույլ չտալ մուխոտներին բերքահավաքից հետո զարգանալ և հողում յեղածներին ել վոչնչացնել ժամանակին վարելով:

Փորձնական կայանների դիտողություններով և խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների պրակտիկայով հաստատված է, վար, սովորաբար, բերքահավաքից ան-

միջապես հետո, յեթե շատ չոր յեղանակ չի յեղել, հացաբույսերի օակի հողը խիստ օտտ չորացած չի լինում լել հնարախորտրուն և օալիք առանց առանձին դժվարութունների վարը կատարել:

Յերբեմն, յերկարատե յիրաշտային յեղանակների ընթացքում հացարույսերի բերքը հավաքելուց հետո հողն այնքան չորացած և լինում, վոր դժվարացնում և աշնանավարը անհրաժեշտ խորությամբ կատարել:

Չորացած հողը վարելու ժամանակ խոշոր կոշտեր են ստացվում և դրա հետ միասին ևլ նա չափազանց փոշի յե դառնում:

Խոշոր կոշտերը, ծածկված մանր փոշով, ստեղծում են հողի մեջ անբարեհաջող դրություն (սորուկաուրա) և չեն ապահովում լավ բերք:

Յերկրամասի մի քանի ծանր հողերը (որինակ, Մայկապի աայոնի ձուլածո սևահողերը) չոր հողը վարելու ժամանակ տալիս են խիստ խոշոր կոշտեր, վորոնք հետագա մշակման ժամանակ վատ են փշրվում, և մնում են յերբեմն մինչև բերքահավաքը, դժվարացնելով ցանքսը և մինչևիսկ հունձը:

Մաստիկ չոր հողերի մշակման ժամանակ պահանջվում և մեծ քանակությամբ լծկան ուժ, ստացվում և խորդուրորս և վատ վորակի վար և հաճախ տեղի յին ունենում կտորումներ:

Ընդհանրապես, աշնանավարը հեշտացնելու և լավ վորակի վար ստանալու համար, հատկապես պինդ և ծանր հողերի վրա, աշնանավարը պետք և կատարել, այսպես կոչված «հողի հասունության» ժամանակ:

Մրա վրա մատնանշում են մեր Միության և արտասահմանի մի շարք խոշոր գիտնականներ (ակադեմիկոս Վիլյամսը), (գերմանացի գիտնականներ Գլինց, Կրաուդե): Հասուն հողը վարելու ժամանակ ստացվում և ամենաբարձր վորակի վար ամենաքիչ լծկան ուժ ծախսելով:

Հողի հասունութունը բնորոշվում է հետեյաբով.

1) Այդպիսի հողը բուսնոցի մեջ ամուր սեղմելով նրանից ջուր չի քամվում, այլ գունդը վերեից ցած ընկնելու ժամանակ փշրվում է մանր կտորներով:

2) Հողը գութանին չի կոչում, շուռ տված շերտը չի փայլում և փշրվում է հասիկներով: Շատ խոնավության դեպքում հողը կոչում է, քսվում է չորանում և դառնում է պինդ ամուր կոշտեր:

Թեթև հողերը վարելու ժամանակ պետք է խուսափել նրանց ավելի չոր դրությամբ մշակելուց, վորովհետև նրանք հեշտությամբ փոշի յին դառնում և հետո մակերևույթի վրա առաջանում է ամուր կեղև: Այդպիսի հողերն ավելի լավ է վարել նրանց հասունանալուց հետո, կամ ավելի խոնավ դրությամբ, ակոսն ավելի լայն անելով և վարող դործիքին ավելի դանդաղ ընթացք տալով:

Վարելու համար հողի ամենալավ դրության շրջանը պետք է սգտադործել ամենայրիվ կերպով և ամենապահանջկոտ բույսերի համար (գարնանացան հացաբույսեր, ճակնդեղ): Սակայն այս դեպքում պետք է ինկատի ունենալ, վոր հողի այդպիսի դրությանը սպասելը բոլորովին անբույլասերի յե, վորովհետև այդ դեպքում կարող է բեկման յենվարկվել առնանավարի կամ պանի, Այս նանգամանկ ամենեվից չի կարելի աչաբող անել:

Արտադրական պայմաններում անհրաժեշտ է առանձնապես սգտադործել հողի ամենալավ դրությունը աշնանավար կատարելու համար, սակայն ամենին ժամանակը չփախցնել նաև հողի դանազան դրությունների ժամանակ ևս ուժեղ կերպով վարը անել: հակառակ դեպքում այս յերկու մոմնտներն անշնորհք կերպով համադրելով, աշնանավարի պլանի կատարումը կդրվի բեկման սպառնալիքի տակ:

Այդ պատճառով արտադրական պայմաններում աշնանավարի վորակը լավացնելու և հեշտացնելու համար անհրա-

ժեշտ և լայն կերպով կիրառելու ծանծաղավարը, նույնպես ել  
աշնանավարը կատարել նախադուրբան և ջեյնտերնիս ունե-  
ցող գուրթաններով:

Իաշտերի մուխոտերով խիստ շատ կեղտոտված դեպքում  
աշնանավարից առաջ կատարված նախորդ ծանծաղավարը  
կնպաստի մուխոտերի վոչնչացման: Առանձնապես լավ աղ-  
դեցութուն և անուժ հացահատիկների և արտոնների հնձած  
տեղերի նախապատրաստական ծանծաղավարը այն հոդաբա-  
ժինների վրա, վորոնք շատ կեղտոտված են միամյա (չծաղ-  
կող) կորնդանով, մկնախոտով և բազմամյա մուխոտերով:

Սովորական վարի ժամանակ հնձած կոթերը և մուխոտ-  
տերի ցողունները հենվում են նախորդ շերտին, առաջացնե-  
լով ողի համար միջանցուկ, թեք շերտ, վորը ցանքսից հետո  
յի վատ մշակության դեպքում մնում և:

7239

Ոգի աղպիսի շերտերի ներկայութունը հասցնում և այն  
տեղը, վոր վարված շերտը կտրված և լինում յենթահողից  
Աղպես վարված հողերի մեջ ցանված սերմերը իրենց զար-  
գացման սկզբի շրջանում, գարնան, բավականանում են միայն  
այն խոնավությամբ, վորը կա այդ վերի շերտում և վորը  
մատակարարվում և անձրևներից: Յերաշտային գարնան, ար-  
տի աղպիսի դրության դեպքում, ցանքսերը վատ են զար-  
գանում և հաճախ յե աշտից փչանում են:

Բացի դրանից, ոգային շերտերն արգելում են ավելի  
տակը գտնված հողի տաքանալուն, վերևից ներքև թափան-  
ցող տաքության առաջը կտրելով:

Այդ նույնպես անբարհիսաջող կերպով և անդրադառնում  
ծիլերի վրա:

Յեթե բերքահավաքից հետո դաշտն անմշակ թողնենք,  
այն ժամանակ անպաշտպան հողի վրա թափվող անձրևից  
բայքայվում և հողի կառուցվածքը: Անձրևների ժամանակ  
հողը վերևից տղմանման ցեխ և դառնում, իսկ չորանալուց  
հետո պնդանում և; ճաքճաքվում և կեղև և առաջացնում:

ողի մուտքը հողի մեջ դժվարանում է, հողը նստում է և շատ պնդանում է, խոնավությունը հողից ուժեղ կերպով դուրսիցանում է, խսկ անձրևային ջուրը անողուտ կերպով ցածր է հոսում պնդացած մակերևույթից:

Ծանծաղավար կատարված դեպքում պատկերը խիստ կերպով փոխվում է: Ծանծաղ մակերեսային հերկը հողը խոնակելով հնձած ցողունների մնացորդների, արմատների և մուլախոտերի հետ, առաջացնում է մակերևույթի վրա փխրուն շերտ: Այս շերտը պահպանում է հողը անձրևների քայքայիչ գործողությունից, ապահովում է խոնավության լավ ներծծումը և պահպանում է հողը չորանալուց: Անձրևային ջրի հոսելը մակերևույթից չի նկատվում, վերովհետև նա լավ կերպով ծծվում է հողի մեջ:

Ժամանակին կատարված ծանծաղավարը խաշոր նշանակութուն ունի մուլախոտերի վոչնչացման համար: Բերքը հավաքելուց հետո մինչև այդ ճնշված մուլախոտերն սկսում են արագ դարգանալ: Ծանծաղավար կատարելիս այդ մուլախոտերը մեծ չափով վոչնչանում են մինչև նրանց դարգանալը և սերմեր տալը: Իրա հետ միասին մուլախոտերի մինչև բերքավաքը և բերքահավաքի ժամանակ թափված սերմերը, ծանծաղավար կատարելիս, ընկնելով մշակված հողի մեջ, ծլում են: Բույսերի ծիլերը շատ յերևալու դեպքում կարելի չէ վոչնչացնել տափանելով կամ հետագա աշնանավարով:

Ծանծաղավարի ժամանակ նկատվում է նույնպես վնասատուների վոչնչացումը, ինչպես հենց ծանծաղավարից, նույնպես և թռչունների կողմից:

Ծանծաղ վարած հողը ապահովում է հունչից հետո մնացորդների տակով անելը, վոր շատ կարևոր է ժանգոյի դեմ մղած կռիվում:

Այս բոլորի հետևանքն այն է, վոր հնձած տեղերի ծանծաղ վարելը հեշտացնում է հետագա աշնանավարը, ապահովում է վարի ավելի լավ վորակը և նպաստում է բերքի բարձրացման:



Հողի խոնավության 0-ի անմիջական հետադասությունները նրա տարրեր մշակության ժամանակ Պրիկուսկի փորձնական կայանում, վորը դանվում է յերաշտային պայմաններում, ցույց տվին, վոր ծանծաղավար կատարելիս հողի խոնավության տոկոսն ամենաբարձրն է յեղել:

Այս կայանում 1926 թվին ստացվել են այսպիսի տվյալներ հողի խոնավության 0-ի մասին, դարն օնացան ցորենի համար տարրեր մշակման ժամանակ հողաշերտի 0-ից մինչև 50 սմ խորության մեջ նսյիմբերի 15-ին.

Հնձած արտը ծանծաղ վարելուց հետո . . . . .	10,4 <sup>0</sup> / <sub>0</sub>
Ոգոստոսի մեջ վարելուց հետո . . . . .	8,6 <sup>0</sup> / <sub>0</sub>
Սեպտեմբերի » » » . . . . .	8,2 <sup>0</sup> / <sub>0</sub>
Հոկտեմբերի » » » . . . . .	8,0 <sup>0</sup> / <sub>0</sub>

Ինչպես յերևում է, հողի ամենաշատ խոնավությունը յեղել է հնձելուց հետո կատարված ծանծաղավարի մեջ (10,4<sup>0</sup>/<sub>0</sub>) և ամենաքիչը հոկտեմբերի ուշ վարի մեջ (8<sup>0</sup>/<sub>0</sub>):

Ռոստով-Նախիջկանի փորձնական կայանում ստացվել են 18 սմ խորության մեջ հողի խոնավության այսպիսի տոկոսային ցուցիչներ:

Մանծաղավար չկատարված հողամասում . . . . .	15,7 <sup>0</sup> / <sub>0</sub>
Դիակավոր կուլտիվատորով վարած . . . . .	16,5 <sup>0</sup> / <sub>0</sub>
Զապանակավոր տափանով » . . . . .	17,96 <sup>0</sup> / <sub>0</sub>
Քառախոփ գութանով » . . . . .	20,3 <sup>0</sup> / <sub>0</sub>

Ամենաշատ խոնավությունը նկատվում է քառախոփ գութանով վարած հողամասում:

Այսպես, հնձած սեղերի ծանծաղ վարելը նպաստելով հողի մեջ խոնավության կուտակմանը յնվ պահպանմանը, հանդիսանում է յերաօթի դեմ կռվելու միջոցներից մեկը:

Ռոստով-Նախիջկանի փորձնական կայանի դիտողությունների համաձայն, գութանակերպ գործիքները (ծանծաղահերկիչներ, բուկկերներ և այլն) տալիս են ավելի լավ

վորակի ծանծաղավար կոթերի և մուխոտերի արմատները կտրելու, կոթերը ծածկելու հողն ավելի լավ փխրունացնելու և վերին շերտերը տակից կտրելու անսակեաից: Դրա շնորհիվ հողի մակերևույթի վրա ստացվում և հարթ, փխրուն շերտ, վորը պահպանում և հողը շորանալուց:

Գուլթանակերպ գործիքները, Ռոստով-Նախիջևանի փորձնական կայանի գիտողությունների համաձայն, հնձած տեղերի ծանծաղ վարելու դեպքում ավել են նաև ամենալավ բերքեր և դրա հետ միասին լավ վորակի (ավելի լիտկի) հատիկ:

Այսպես՝ գարնանացան հացաբույսերի բերքը բարձրացնելու յեվ մուխոտերը վոչնչացնելու համար անհրաժեշտ և լայն կերպով կիրառել ծանծաղավար հնձելուց հետո:

Պետք և ինկատի ունենալ, վոր Ռոստով-Նախիջևանի փորձնական կայանի կատարած չափումները ցույց են սվել, վոր ծանծաղավար չկատարած դատքը ավելի դժվար և վարվում կատարածից մոտավորապես այնչափ, վորչափ վոր ծախսվում և ուժ հնձած արքր ծանծաղ վարելու ժամանակ:

Ռոստով-Նախիջևանի փորձնական կայանի ավյալների համաձայն, ծանծաղավար չկատարած դաշտը վարելու համար ձիով վարելու դեպքում միջին հաշվով հարկավոր և մեկ ավելորդ ձի: Ծանծաղավար կատարած դաշտերը ավելի խոնավ են և ավելի հեշտ են վարվում և տալիս են ավելի հարթ և քիչ կոշտավոր վար:

Գուլթանակերպ գործիքներով ծանծաղավար հատկապես անհրաժեշտ և կատարել յերկամյա մուխոտերով (առանձնապես միամյա չծաղկող կորնգանով), բազմամյա մուխոտերով և մկնախոտով կեղտոտված դաշտերում: Չոր հողը չոր յեղանակին ծանծաղավար կատարելը նպաստում և խոզափորփրուկի վոչնչացման:

Կոճղարմատ (սեզ, խոզափորփրուկ) և արմատածիլ մուխոտերից (տասուսկափուշ, կաղանջան, պատատուկ) ազատ

հողաբաժիններում ծանծաղավար կատարելու համար կարելի  
յե կիրառել Նաև ծանծաղ մշակող, լայն սեղ առնող գործիք-  
ներ (ցորենի դուխաններ):

Սակայն, անհրաժեշտ և հաստատ հիշել, վոր ծանծաղա-  
վարն ամենեկին չի կարող փոխարինել հիմնական աճեցնա  
վարին, վորը պեճ և կատարել անկախ այն բանից, ծանծաղա-  
վար կատարված և թե վոչ:

Ծանծաղավարը դրական ազդեցութիւնն անում և միայն  
այն դեպքում, յեթե նա կատարվում և բերքահավաքից կամ  
անմիջապես հետո, կամ միքիչ ժամանակ անցած:

Ծանծաղավարն ուշացնելու դեպքում, յերբ դեռինը չու-  
րանում և պնդանում և, նրան համարյա թե չի կարելի կա-  
տարել, վորովհետև գործիքները լիովին լարելու դեպքում ևս  
միայն չանդռում են հողի մակերևութը, չկարողանալով  
խոր մտնել:

Այս դեպքում պետք և ծանծաղավարից հրաժարվել և  
անմիջապես աշնանավար կատարել:

Իդուր չե, վոր սրա շուրջը գերմանացի գիտնականներից  
մեկը (Կրաուզե) ծանծաղավարի ժամկետի մասին այսպես  
պատկերավոր կերպով և արտահայտվել. — «ծանծաղահերկիչը  
պետք և բերքը տանող սայլի հետից կապել», այսինքն  
ծանծաղավարը պետք և բերքահավաքից անմիջապես հետո  
կատարել:

Հաշվի առնելով դաշտերի սաստիկ կեղտոտված լինելը մո-  
լտիստերով մեր յերկրամասում և ծանծաղավարի դրական  
ազդեցութիւնը գարնանացան հացաբույսերի բերքի վրա,  
կոլտնտեսութիւնները և խորհոտեսութիւններն այս ազ-  
րոտեխնիկական միջոցի վրա պետք և դարձնեն ամենալուրջ  
ուշադրութիւն:

Սակայն, դարձյալ հիշեցնում ենք, վոր ծանծաղավարն,  
իբրեւ հողի ծանծաղ մօակում, ամենեկին չի կարող փոխարի-  
նել աճեցնավարին:

Այդպիսի փորձեր կարող են տեղի ունենալ, յերբ ծանծա-  
ղավարի կերտաբանքի օակ պեթ և մեզ անցնի յերես վարելը,  
իսկ հետո պիտի դանձնն արշակախիճ պատճառներ, և աշնա-  
նավարը Հպիտի լինի: Այնպիսի «խելագներ» եւ կզանձեն,  
իսկ դրանց հետ եւ միտսին կուսնտեսության վօխերիմ թշ-  
նամիները — կուլահները, վորոնք կփորձեն «գիտականսրեն»  
հավատացնել և հիմնավորել աշխատանքի պրակտիկայով,  
վոր միանգամ յեթե ծանծաղավար կատարված և, ուրեմն  
աշնանավար չկա — ալդ գատարկ բաներ են: Այսպիսի արա-  
մադրություններին և փորձերին, իրրե հակախորհրդային և  
տկնհայտնի փրատարարական, հարկավոր և ամուր խփել:

Յուրաքանչյուր տնտեսություն պետք և պլանով հաշվի  
առնի իր հնարավորությունները, հաշվի առանձին հոգա-  
բաժինների կեղատավածության աստիճանը և բնույթը ու  
ճիշտ վորոշի, վոր հոգամասերում և ինչ չօփով կարող և  
անցկացնել ծանծաղավարը և ապա հիմնական խոր աշնա-  
նավարը, և վոր հոգամասերում պիտի կատարվի իսկույն և  
յեթ աշնանավարը:

Հարկավոր և հաստատ հիշել, վոր ծանծաղավարը յով առնա-  
նավարը իբր չեն փոխարինում, այլ լրացնում են:

Աշնանավարի և ծանծաղավարի խորը նշանակությունը  
հաշվի յե առնվում ջախջախված կուլակության մնացորդ  
ների կողմից և այս կարևոր աղբոստեխնիկական միջոցի  
շուրջը պիտի հրահրի գասակարգային կոիվը: Կուլակության  
մնացորդները պետք և փորձեն բեկանել աշնանավարի և ծան-  
ծաղավարի հաշող կատարումը: Նրանք բաց կերպով չեն  
դնա, բայց նրանք կաշխատեն իջեցնել աշխատանքի վո-  
րակը և արժեքադուրկ անել աշնանավարի և ծանծաղավարի  
նշանակությունը:

Այս գրությունը պետք և հիշել, վորովհետև վարի մեջ  
«հուճ» տեղերը մոլախոտերի տնկարաններն են, բույսերի  
հիվանդությունների և ամենից առաջ ժանդուի ոջախներն:

1932 թվին ժանգար շատ կորսնտեսություններէ և խորհ-  
տնատեսությունների ահագին փնաս հասցրեց, և ազդեց ա-  
ւանձին կորսնտեսություններէ մեջ բերքի իջեցման վրա  
1933 թվին:

Հետագա մանր, վոչ իր ժամանակին կատարված և ցածր  
վորակի աշխատանքը, ժանդա հիվանդության վարակի ներ-  
կայությամբ, կկարողանա դեռևս շատ կորուստներ բերել:

Ահա թե ինչու կորսնտեսություններէ, ՄՏԿ-ի և խորհ-  
տնատեսություններէ ամբողջ ուշադրությունը պետք և ուղղ-  
ված լինի հողի իր ժամանակին և բարձրավորակ աշնանա-  
յին մշակման վրա:

## ԻՆՉՊԻՍԻ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԱՇՆԱՆԱՎԱՐԸ ՅԵՎ ԾԱՆԾԱՂԱՎԱՐԸ

Գարնանացան բույսերի համար հողերը վարելու խորու-  
թյան կանոնավոր սահմանումն ժնի մեծ նշանակություն:

Վերջերս մի շարք հայտնի գիտնականներ խորհուրդ  
եյին տալիս վարը ծանծաղ կատարել (պրոֆ. Տուլայկով և  
ուրիշները):

Այս գիտնականներն այն յերակետն ունեյին, վոր փորձ-  
նական կայաններում հետագա կուլտուրաների բերքի վրա  
վարի խորության ազդեցությունը ուսումնասիրելու ժամա-  
նակ ստացվիլ են հակասական յեղրակացություններ, այ-  
սինքն մերթ ամենաշատ բերք տալիս եր խոր վարը, մերթ  
միջինը, մերթ ծանծաղը: Հաշվի առնելով, նաև այն, վոր  
ծանծաղ վարը շուտ է կատարվում և ավելի եժան է նստում,  
նրանք ել սկսեցին խորհուրդ տալ ծանծաղ վար կատարել:  
Սակայն այս դատողության մեջ այդ գիտնականները խոշոր  
սխալ արին: Այդ սխալը կայանում է նրանում, վոր խոր

վարը հանդիսանում է մուլխոտերի վոչնչացման հիմնական միջոցներից մեկը: Իսկ յեթե մի քանի փորձնական կայաններում խոր վարը բերքը չէր բարձրացնում, այդ բացասարվում է, գլխավորապես, նրանով, վոր փորձնական կայանների հողերը համեմատաբար ժաջուր են մուլխոտերից:

Առանձին դեպքերում ել շատ խոր վարը վոչ միայն բերքը չէր բարձրացրել, այլ և իջեցրել էր այն պատճառով, վոր շուտ եր տրվել սակավ սրողատու յենթահողը, վորը չէր ապահովել բույսերի նորժալ զարգացումը, առանձնապես սկզբի ժամանակում:

Վարի խորության ազդեցությունը մուլխոտերի վրա իր ժամանակին ուսումնասիրվել էր Բուզուլուկի փորձադաշտում: Այս փորձադաշտի դիտողությունների համաձայն վորքան վարը խորն էր կատարվում, այնքան մուլխոտերով կեղատավածությունը իջնում էր: Այսպես, յեթե ընդունենք կեղատավածությունը 10 սմ խորության ծանծաղ վարի մեջ 100<sup>0</sup>/0, այն ժամանակ միջին վարի մեջ հավասար է 70<sup>0</sup>/0, իսկ 20 սմ խորության դեպքում-ընդամենը 40<sup>0</sup>/0 է:

Կուբանի փորձնական կայանում դարնանացան ցորենի կեղատավածությունը սարբեր խորությամբ վարված հողաբաժինների ցանքսերում հետևյալն էր.

Մուլխոտերի կշիւրը  
 $\frac{1}{2}$  ք. մետրից գրամներով:

Ծանծաղ վարի մեջ 10 սմ խորության . . .	35,0
Միջին » » 15 » » . . .	29,3

Պրիկուսակի բամբակագործական կայանի դիտողությունների համաձայն, վարի խորացումը 15 սմ-ից ավելի, քչացնում է մուլխոտերի ընդհանուր քանակը, համեմատած ավելի ծանծաղ վարի հետ, 10 սմ խորության, համարյա յերեք անգամ:

Այսպիսով, խոր վարը նպաստում է մուլախտների պակասեցման: «Իրզիստիա» (հունիսի 3-ի 1933 թ.) լրագրում «ծանծաղ վարի առավելության մնասակար թեորիայի դեմ» պրոֆ. Տուլայկովը — ծանծաղավարի կողմնակից — ուղղակի գրում է. ծանծաղավարը դաշտերի ուժեղ կերպով կեղտոտվելու, հեռեկայիս և նրանց բերքի իջեցման պատճառներից մեկն է:

Պոստովանելով իր սխալը, շարունակում է. «Յեթե փորձնական հիմնարկության աշխատանքի պայմաններում խնամքով և ժամանակին կատարված ծանծաղ վարը հողի մշակության թուլատրելի միջոց է, կեղտոտված դաշտերի վարը, վոչ իր ժամանակին անցկացված, յերբեմն բուրովին դեպի աշխատանքը բացարձակ մնասարար աշխատանքի պայմաններում, այս ծանծաղ վարը դառնում է միջոց դաշտերի անվելի ևս կեղտոտվելուն, կովի մի միջոց բերքի բարձրացման դեմ:

«Յեմ այն ևս, վոր ավելի ծանրացնում է մեր հանցանքը սոցիալիստական շինարարության առաջ — այդ այն է, վոր դինված դիտական տվյալներով, հիմնարկության կամ նրա առանձին աշխատողի հեղինակությամբ, մենք զենք տվինք դասակարգային թշնամու, մնասարարների ձեռքը, վորոնք նպատակ են դրել ամենատեսակ միջոցներով խանգարել մեր սոցիալիստական շինարարության: Դիտականորեն հիմնավորված տվյալների քողի տակ մնասարարները լայն կերպով ոգոսադործեցին իրանց նպատակների համար ծանծաղ վարը և փչացրին հողը, իջեցրին սոցիալիստական դաշտերի բերքը:

Սրա հեռեկանքով, ուրիշ տգրոտեխնիկական միջոցների խանգարման հետ միասին (ցանքսի ժամկետը, ցանելու նորման, մշակողինների խնամքը և այլն) և ցանքաշրջանների բացակայությամբ կուլանտեսությունների և խորհունտեսությունների դաշտերն այժմ սարսափելի կերպով կեղտոտված են:

Ծանծաղ վարելու դեպքում (առանձնապես կեղտոտված և չորացած հողերի վրա), բացի կեղտոտվածության ուժեղանալուց, ավելի պիտի և անպահովել լավ վորակի վարը և հում թողնելուց խուսափելու: Ընկ. Կազանովիչի ճիշտ արտահայտությամբ, ծանծաղավար կտաարելու ժամանակ գութանը չի վարուէ, այլ «պարուս և», այսինքն ամբողջ ժամանակը հողից դուրս և թռչում:

Վերջապես, ծանծաղ վարելու դեպքում չին ստեղծվում խոնավությունը և սննդարար նյութերը կուտակվելու և հողի լավ կառուցվածքի (ստրուկտուրայի) համար պայմաններ, այլ ամեն տարի ծանծաղ վարելը հասցնում և վերին շերտի փոշիանալուն և ուժասպառ լինելուն: Վերին շերտի փոշիանալուց հաճախ տեղի յին ունենում քամու հողը փչելը («փոշու փոթորիկներ») և անձրևներից հետո, բույսերի համար ֆլասակար կեղև առաջանալը:

Սույն սարվա հուշվարին Միության ԿԿԿ-ի յերբորդ սեսիան, հողագործության ժողկոմ ընկ. Յակովլևի ղեկուցման համաձայն, վորոշում հանեց ծանծաղ վարի առավելության ֆլասակար տեսությանը հակադարկ տալու անհրաժեշտության մասին, վորի գրոշի տակ շշատ դեպքերում ֆլասարար տարրերը փչացնում եյին հողը:

Ահա թե ինչպես ամեն մի կուտնտեսության, ՄՏԿ-ի և խորհունտեսության մեջ չի կարելի թույլ տալ ծանծաղ վարել, համարելով այս հակախորհրդային դրույթ:

Վճռական հակադարկ տալով ծանծաղ վարին, դրա հետ միասին անհրաժեշտ և թույլ չտալ մեզ անցկացնել մի ուրիշ վոչ պակաս ֆլասակար դրույթ՝ «վարել մինչև վերջին խորություն», վորովհետև «վորքան ավելի խորը, այնքան ավելի լավ»: Այսպիսի փորձեր յեղել են և պիտի լինեն: Կենտրոնական ղեկավար գիտական գյուղատնտեսական ժուրնալները («Մոցիալիստական բեկոնստրուկցիա», «Ազրարային Ֆրոնտում») նախադրուշացնում են այս մասին գյու-



դատնտեսներին, կոլտնտեսականներին, ՄՏԿ-ի և խորհան-  
տեսությունների բանվորներին:

Կուսակցութեան կայուն ահ դամ և հայտնի դիտնական  
ակադեմիկոս Վ. Թ. Վիլյամսը իր հոդվածում—«Հողի խոր և  
ծանծաղ մշակման մասին» (տես «Социалистическое зем-  
леделие» լրագիրը 1933 թ. հունիս 27) գրում է.

...«Միայն հողի ծանծաղ մշակման լողունդի փոխարի  
նելն էլ խոր մշակման նոր լողունդով բուրոսվին համահա-  
վասար չփոխվ հրապարակ և բաց անում գիտակցական և  
անդիտակցական միասարարութեան»:

Զափաղանց խոր վարն ևլ մնասակար և այն պատճա-  
ռով, վոր հաճախ դրա ժամանակ շուռ և տրվում անպտուղ  
ծանր կամ ավաղային յենթահողը: Բույսերի սերմերն, այդ-  
պիսի շերտում ծլելով, վատ են դարգանում և հետադայում  
լինում են ճնշված:

Այդ պատճառով չափաղանց խոր վարելու համար արված  
ժամանակի, միջոցների և ուժի ծախսերը վոչ միայն չեն  
արգարանում, այլ, ընդհակառակը, հաճախ այդպիսի վար  
անելու դեպքում նկատվում և բերքի իջեցում:

Այսպիսով, թույլ չտալով ծանծաղ և չափաղանց խոր  
վար կատարել, յուրաքանչյուր առանձին դեպքում, աշնտ-  
նավարի խորությունը պիտք և սահմանվի, հետևյալ պայ-  
մանները հաշվի առնելով.

1. Տվյալ հողաբաժնի հողի վերնաշերտի առանձնահատ-  
կությունները, այսինքն վերին պտղատու (մուկ) շերտի  
հաստութեան խորությունը և նրա պնդությունը՝ ըստ վո-  
րում վորքան վարված շիրտը խորն և և պինդ, այնքան ևլ  
կարելի յե նրան խոր վարել:

2. Այդ հողաբաժնի կեղտոտվածութեան աստիճանը և  
բնույթը: Այս բանի վրա պետք և հատուկ ուշադրություն  
դարձնել: Մասնավորապես խիստ կեղտոտված հրդարաժին-  
ները և հատկապես տոտասակափշով, կաղանչանով, պտաս-

տուկով, հնդկացորենով, պետք է այս մտախոտերին ուժապառ անելու և վոչնչացնելու համար ավելի խոր վարել: Սեղով կեղտոտված հողաբաժինները հարկավոր և 1<sup>1</sup>/<sub>2</sub> Չ ս.Վ ավելի խոր վարել կոճղարմատների հիմնական շերտի հաստությունից, վորն անհրաժեշտ և անմիջական զննությամբ վորոշել:

3. Յենթահողի առանձնահատկությունները և բնույթը (պինդ կավ, ավաղ, խճաքար, քարեր և այլն): Պարզ և, վոր այն հողաբաժինները, վորոնց յենթահողերը անբարեհաջող են, խոր վարել չի կարելի:

4. Հողի խոնավության վիճակը և յեղանակը: Սակավ խոնավություն ունեցող (ահասուն) հողերը խոնավ յեղանակին ևլ հեշտ են հերկվում, ընդհակառակը՝ չորացած հողերը չոր յեղանակին ևլ հարկ և լինում մի քիչ ավելի ծանծաղ վարել:

5. Այն կուլտուրաների առանձնահատկությունները և պահանջները, վորոնց համար վարվում և հողը, հաշվի առնելով վոր մի քանի բույսեր պահանջում են ավելի խոր վար, մյուսները վարի խորության վերաբերմամբ ավելի պակաս զգայուն են: Մասնավորապես, վարի խորության վերաբերմամբ ավելի զգայուն են յեղիպտացորենը, արմատապտուղները (շաքարի և կեշի ճակնդեղը), կարտոֆիլը:

6. Այն հողաբաժինները, վորոնք խիստ վարակված են մնասատուներով (սողոցուկներ, հացահատիկային ամիս, բզեզներ և ուրիշներ) և ժանդոով, հարկավոր և ավելի խոր վարել:

Աշնանավարի համար յերկրամասի պայմաններում որինակելի նորմալ խորությունը պիտի լինի 16—18 ս. մ.:

Այս խորությունը պակասեցնել կարելի յե թույլ տալ միայն սիզապատ հողեր վարելու ժամանակ, յեթե նրա կոճղարմասները ավելի խոր չեն սեղավորված և «ծանծաղ» հողեր վարելու վաստանակ (յերկրամասի արևելյան ռայոններում, նույնպես և ավաղոս և խճաքարային յենթահողերում):

Յուրաքանչյուր առանձին ղեպքում վարի այս կամ այն խորութիւնը պետք և սահմանվի վերև ցույց արված հան-  
դամանքների հաշվառման, տեղական պրակտիկայի և այդ  
հարցի լայն քննութեան հիման վրա, հիմք ընդունելով յեր-  
կրային դիրեկտիվ և հողային կադմակերպութիւնների հա-  
մապատասխան ցուցմունքները տվյալ ռայոնի հերկի խո-  
րութեան մասին:

Այստեղ պարտաւոր է ղեկաւարմա լինել չի կարող: Կարե-  
վոր և միայն լավ յուրացնել այն, վոր, ինչպես ծանծաղ,  
նույնպէս և չափադանց խոր վարելը, համարյա հավասա-  
րապէս ֆլասակար և:

Ծանծաղավարը անհրաժեշտ և կատարել 7 — 10 ւմ  
խորութեամբ, նրա խորութիւնը սահմանելով այնպի-  
սի հաշվով, վորպէսզի հետագա աշնանավարը կատարվի  
6 — 8 ւմ ավելի խոր, համեմատած ծանծաղավարի խորու-  
թեան հետ: Այս պայմանը չկատարելու ղեպքում ծանծաղ  
կատարված աշնանավարի ժամանակ, հնարավոր և դարձյալ  
դուրս հանել մակերևույթի վրա հնձված մնացորդները:

Վայրի վարսակով վարակված հողերի վրա, յիժե նրանք  
հասկացվում են վաղ դարնանացան հացահատիկների հա-  
մար, ծանծաղավար կատարել հարկավոր չե, վորովհետև դա  
ուժեղացնում և դարնանը վայրի վարսակի ծլումը և հացա-  
բույսերի կեղտոտումը:

Աշնանավարի և ծանծաղավարի համար կոճղարմատներ  
և արմատածիլ մուխոտներով վարակված հողերի վրա ցորենի  
դութաններ և դիակավոր կուլտիվատորներ գործադրել ամե-  
նեվին չի կարելի:

Այս գործիքները, կտրտելով այս մուխոտների կոճղար-  
մատները և արմատները, նպաստում են նրանց բազմացման:

## ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԱՐԴՅՈՔ ԱՄԱՌՆԱ-ԱՇՆԱՆԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՆԱՄՔ ՏԱՆԵԼ ԱՇՆԱՆԱՎԱՐԻ ՎՐԱ ԹԵ ՎՈՉ

Սովորական պայմաններում լավ հերկված աշնանավար հողը մինչև հետեվյալ տարվա դարձանը վոչ մի լրացուցիչ մշակում չի պահանջում: Սակայն առանձին դեպքերում, դաշտերը մուլխոտերից ավելի լավ մաքրելու համար, աշնանավարը պահանջում և առանձին խնամք:

Այսպես, սեղով և խողափորփրուկով կեղտոտված հողերը վարելու դեպքում, խոնավ հող և յեղանակ լինելու դեպքում, այդպիսի աշնանավարը պետք և վարելուց հետո անմիջապես դադանահավոր կամ լծակավոր (լինի) տափաններով 2 — 3 հետք մշակել այնպես, վոր դուրս հանվեն (պակվեն) նրանց միջից կոճղարմատները և թույլ չտալ սրանց նորից կենդանանալ:

Ընդհակառակն, այսպիսի հողաբաժնի վրա աշնանավար կատարելու դեպքում չոր հողի և չոր յեղանակի ժամանակ աշնանացանը պետք և թողնել շերտերով բտոչորելու: Կամ, վորպեսզի կոճղարմատները չսրանան: Սաստիկ անձրևից հետո, յերբ շերտերը թրջվեն, կոճղարմատները պետք և տափանով հանել և ալրել:

Այն հողաժասերում, վորոնք կեղտոտված են սեղով և խողափորփրուկով, կոճղարմատները յերբեմն հարկ և լինում մի քանի անգամ մաքրել:

Վաղ կատարված աշնանավարը յերբ խոնավ, տաք և յեկրորատե աշուն և լինում, յերբեմն ծածկվում և մուլխոտերով: Ճիշտ և, սիւմյա մուլխոտերը սարսափելի չեն, վորովհետև վրա հասնող սառնամանիքները նրանց վոչնչացնում են, սակայն ձմերոզ մուլխոտերը, յերկամյաները և բազմամյաները պահպանվում են մինչև դարուն:

Ձմերոզ յերկամյա և բազմամյա մուլխոտերի մեծ քանակությամբ յեղած դեպքում ողտակար և լինում աշնանա-

վարը տափաքել կամ մշակել թաթանման կուլտիվատորնե-  
րով, իսկ խիստ շատ կեղտոտված դեպքում բազմախոփանի-  
ներով ևս: Այսպիսի մշակումները կնպաստեն դաշտերի մո-  
լախոտերից ավելի լավ մաքրվելուն:

## ԻՆՉՊԻՍԻ ՈԳՈՒՏ Ե ԲԵՐՈՒՄ ՀՆՁՎԱԾ ԱՐՏԻ ԱՅՐԵԼԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐԵԼ ԱՅԴ

Յեղած դիտողությունները խոսում են ծանծաղավարից  
կամ վարելուց առաջ հնձված արտերի այրման բերքի բար-  
ձրացման վրա ունեցած խոշոր նշանակության մասին:

Ոմսիկ կայարանի տվյալներով, հնձված արտերի այրելը  
նպաստել է զարնանացան ցորենի բերքի բարձրացման  
50% -ով:

Հյուսիսային Կովկասի Հատիկային տնտեսության Ինս-  
տիտուտի դիտողություններին նայելով, հնձված արտերի  
այրելը 7 աճումից ավելի պակասեցրել է մոլախոտերի քա-  
նակը, զարնանացան ցորենի բերքը և հատիկի վորակն էլ  
բարձրացրել է:

Ռոստով-Նախիջևանի փորձնական կայանի դիտողու-  
թյունների համաձայն հնձված արտերի այրելը նպաստում  
է հացահատիկային սղոցուկի թրթուռների վոչնչացման:

Բացի դրանից, ումերիկական փորձնական կայան-  
ների տվյալների համաձայն, հնձված արտերի այրելը նը-  
պաստում է մոլախոտերի թափված սերմերի վոչնչացման:

Այսպես, այն հողամասերում, վրաբեղ հնձված արտեր  
այրել են, 1 հեկտարի վրա հառված են յեղել մոլախոտերի 356  
հազար սերմ, իսկ այրած սեղում 217 հազար. այսինքն մո-  
լախոտերի սերմերի քանակը քչացել է 39% -ով կամ մի քիչ  
ավելի 1/3-ից:

Վերջապես, կան ցուցմունքներ, վոր հնձված արտի այրելը նպաստում է ժանգոի վոչնչացման:

Իրա հետ միասին հատիկային անտեսութեան Լնասի-տուտը նշում է, վոր հնձված արտի այրելու դեպքում ծան-ծաղալարը և հերկը ստացվում է ավելի լավ վորակի և հեշ-տանում և հողի մշակութունը:

Այս բանը հաշվի առնելով, անհրաժեշտ և հնձված ար-տերի այրելը լայն կերպով կիրառել:

Հնձված արտի այրման ժամանակ հիմնական պայմանն է գործադրել ամենամաքակրկիս հակահրդեհային միջոցներ-առանց վորոնց այրումը կարող է մեծ դժբախտութեաններ պատճառել:

Այրումը հաջող անցկացնելու համար, հարկավոր է այդ կտտարել 7 — 10 սրից վոչ ավելի հնձելուց հետո:

Այդ բացատրվում է նրանով, վոր հնձելուց հետո յեր-կար ժամանակ անցնելուց հետո հնձված արտը ծածկվում է կանաչ մալխոտերով, վորոնք արգելք են հանդիսանում այ-րելուն:

Հատկապես լավ է այրվում կոմբայնով և վինդրոուերով հնձված խիտ, մաքուր և բարձրակոթ արտը:

Հնձված արտը այրելու ժամանակ նախ և առաջ անհրա-ժեշտ է առանձնապես մանրակրկիտ կերպով մտածել և իրա-դործել բոլոր հակահրդեհային անհրաժեշտ միջոցառումները, ինչպիսի յին.

1. Հաշվի առնել քամու ուղղութեանը և ուժը այն հաշ-վով, վորպեսզի քամին կրակը չքշի դեպի դաշտից չհավա-քած հացաբույսերը, դեղերը, ուրիշ կուլտուրաներով բռնված հասունացող արտերը և դյուղերը: Քամու ուժը չափավոր պետք է լինի (թույլ քամու ժամանակ սովորաբար կրակը հանդչում է և դանդաղ է առաջ շարժվում, իսկ սաստիկ քամու ժամանակ կրակի ուրիշ տեղ անցնելու վտանգն է ստեղծվում):

2. Այրվելիք հողամասերի շուրջը մի քանի ակոս վարել առանձնապես այն կողմից, վոբտեղից կրակն անցնելու վտանգը կա։

3. Վարել մի քանի ակոս մոտակա հացահատիկների հարդի և դարմանի դեղերի շուրջը։

4. Հատուկ հրդեհային հակիչներ դնել ավելներով և բահերով, վորոնց վրա պարտականություն և ընկնում կրակի ուղղության կանոնավորելը և նրան հանդցնելը, յեթե նա անցնում և վարածի այն կողմը։ Հակիչների մաս ոգտակար և ունենալ սայլերի վրա տակառով ջուր մի քանի վեդրոններով կամ ջրմուղով և ձիաքարշ դուրան, վորով անհրաժեշտ տեղերում կատարվում և լրացուցիչ հերկ։

Հնձված արտերի սյրման դեկավարությունը պետք և իր վրա վերցնի Պաջը-ավիտքիժը և կոմյերիտը շիջը։

Այրելու ժամանակ միշտ պետք և հիշել, վոր ամենափոքր վտանգի և վատ կազմակերպության դեպքում, կրակը կարող և դժբախտություն պատճառել։

Իսկական այրումը կատարվում և դանաղան միջոցներով։

Հնձված արաը կրակ և տրվում յերկար ձողերով, վորոնց ծայրերին կապած են հարդի փնջեր, սրսկված այրվող նյութերի մնացորդներով (նավթ, մաղութ, յուղ)։ Հնձված արաը կարելի յե կրակ տալ նույնպես և թեթև սայլի հետևից յերկար մետաղալարով կապած վառած հարդի մեծ փուռնը արտի վրա դանդաղ քարշ տալով։ Վերջապես, հնձված արաը կարելի յե կրակ տալ յերկար մետաղալարի վրա կապած վառած հարդի փուռնը դաշտի վրայով քարշ տալով։ Մետաղալարի ծայրերից բռնում են յերկու հոգի։

## ԱՇՆԱՆԱՎԱՐԸ ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՎՃՌԱԿԱՆ ՈՂԱԿՆ Ե

Կուլակային ֆեոսարարական և կասեցնող աշխատանքի հետեւանքով վերջին տարիները կոլանտեսությունները և խորհանտեսությունները չեյին տղահոյոււմ աշնանավարի պլանի կատարումը:

Դրա փոխարեն այժմ հարկ և լինում տուժելու Դաշտերը սաստիկ կեղտոտված են: Վերջին յերկու տարում խիստ շատ տարածվել և ժանդոր: 1932 թվին խիստ շատ բազմացան միկները, այս բուրն, ընդհանուր առմամբ, ազդում և բերքի իջեցման վրա:

Մշակովի կուլտուրաներով բռնված դաշտերը սաստիկ կեղտոտված են: Նրանք շատ ուժեղ խնամք են պահանջում: Պարզ և, վոր մշակովի կուլտուրաներն ևս չեն տա այնպիսի բերք, ինչպիսին վոր կարելի յե ստանալ 1933 թվի պայմաններում:

Անձրևները, վորոնք սովորաբար քիչ էյին լինում, այժմ աճելի քան բավական են: Սակայն կեղտոտվածությունը և անբավարար խնամքն այստեղ ևս իջեցնում և բերքը:

Աշնանավարը բարձր բերքի կոլում գլխավոր սղակներից մեկն է:

---

## ՊԱՅՔԱՐԸ ԱՇՆԱՆԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ — ԴԱ ՊԱՅՔԱՐ Ե ԲԱՐՁՐ ԲԵՐՔԻ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական մրցման և հարվածայնության լայն ծավալման հիման վրա, վճռական հակազարկ տալով աշնանավարի կուլակային ֆեոսարարական թերազնահատման և ապահովելով հնձված արտերի ծանծաղավարի և այրման:



լայն կիրառոււմը, յերկրամասի կոլտնտեսութիւնները և խորհտնտեսութիւնները պետք ե բարձր բերքի համար բուշակիկյան պայքարի որինակներ ցույց տան:

Բարձրավորակ աշնանավարը և գարնանավարը — դա յերկրորդ ճնգամյակի յերկրորդ տարվա զարեանացան կալտուրաների բարձր բերքի ճիմքն է:

Յերկրամասի կոլտնտեսութիւնները և խորհտնտեսութիւնները ճիշտ կերպով համադրելով կալսելը, հացահանձնոււմը և աշնանացանքսը, պետք է ապահովին աշնանավարի պլանի գերակատարումն այս տարոււմ:

Կուսակցութիւնը և կառավարութիւնը յերկրամասի կոլտնտեսութիւններին և խորհտնտեսութիւններին տվել և արակտորներին նոր պարտիաներ, կազմակերպումն են նոր ՄՏԿ:

Յերկրամասի կոլտնտեսութիւնները և խորհտնտեսութիւնները թէ կազմակերպչական-տնտեսական տեսակետից և թէ քաղաքականապես ամրացած են:

Կասկած չկա, վր 1933 թվի աշնանավարի կամպանիան նշանավոր կդառնա կոլտնտեսական-խորհտնտեսական շինարարութիւն նոր հաղթանակներով:

Կուլակային ֆրասարարական մնացորդների վճռական արմատահան անելու հիման վրա, պետք է գերակատարվի աշնանավարի պլանը ամենալավ վորակական ցուցանիշներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնձած արատանդերի ծանծաղագրի և աշնանագրի նշանակո՞ւ  
 Թյունը դարձանացան կուլտուրաների բերքի բարձրացման մեջ: 1

Ինչու աշնանագրը և հնձած արատանդերի ծանծաղագրը դար-  
 նանային բույսերի բերքը բարձրացում են . . . . . 7

Յերբ և ինչպես պետք և կտատրել ծանծաղագրը և աշնանագրը . 13

Ինչպիսի խորության պետք և կտատրել աշնանագրը և ծանծա-  
 ղագրը . . . . . 23

Հարկագր և արդյոք ամսունա-աշնանային շրջանում խնամք տա-  
 նել աշնանագրի վրա, թե վաչ . . . . . 30

Ինչպիսի սպուա և բերում հնձված տրախ ալբելը և ինչպես պետք  
 և կտատրել այդ . . . . . 31

Աշնանագրը դարձանացան կուլտուրաների բերքի բարձրացման  
 պայքարում զննական սղակն և . . . . . 34

Պայքարը աշնանագրի համար—դա պայքար և բարձր բերքի  
 համար . . . . . 34



3362

C—X



Ответственный редактор А. Г. АВАКЬЯН  
 Технический редактор Г. М. МАРКАРЯН  
 Сдано в набор 10 VIII 1933 г.  
 Подписано в печать 28/VIII 1933 г.  
 Статформат Б 6 125x176  
 Уполкрайлита № Б 400  
 Типография им. «Стачки 1902 г.» СККПТ  
 в Ростове на-Дону  
 Об'ем 1 1/2 п л. Заказ № 3962, Тираж 2000

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043144

Цена 20 коп.

32537

A 7239



На армянском языке

А. И. Медведчук

Лушение и зябь в борьбе  
за высокий урожай

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“

ЭРЦ.ԳԱ.ԼԵՄԵՐ

ՀԱՅԿԱՎ-ԳՐԱՆ ԱՍՍՈՑԻԱՄԿԱՅՈՒ ՓՈՂ. № 53  
ԳՐԱԿԵՆՏՐԱՆ (ԿԼ.ԳՈՏԵՆՏՐ)